

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**Օ Ր Ե Ն Ք Ը**

**«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի աղյուսակի 16-րդ բաժինը լրացնել հետևյալ բովանդակությամբ 6-րդ կետով.

<p>Սեղմված բնական կամ նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացում</p>	ԿՄ	Ք	-	Փ	-	Ո	Հ	Վ»:
---	----	---	---	---	---	---	---	-----

**Հոդված 2.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում օրենքի հրապարակումից վեց ամիս հետո:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ԵՐԹԵՎԵԿՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՄԱՍԻՆ»  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-166-Ն Օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 4-րդ պարբերությունից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերություններով՝

**«գազաբալոնային սարքավորումներ՝** բալոնների և դրանց արմատուրայի (բալոնների խաչուկների, եռաբաշխիկների, փականների), միացնող խողովակների, գազատար խողովակամուղի և դրանց միացման հանգույցների, բարձր և ցածր ճնշման ռեդուկտորների, շարժիչի աշխատանքի կառավարման համակարգի, ստուգիչ-չափիչ և ապահովիչ սարքերի ամբողջությունը.

**գազաբալոնների պարբերական վկայագրում՝** բալոնների պատրաստման և շահագործման տեխնիկական փաստաթղթերով սահմանված պարբերականությամբ և ծավալով իրականացվող տեխնիկական արատորոշում, որի արդյունքում սահմանվում է բալոնի օգտագործման ժամկետը՝ առանց լրացուցիչ արատորոշման:»:

**Հոդված 2.** «Օրենքի 9-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր «իը» կետով՝

«իը) սահմանում է սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների (այսուհետ՝ գազաբալոնային սարքավորումներ) տեղադրման և գազաբալոնների պարբերական վկայագրման կարգը.

**Հոդված 3.** Օրենքը լրացնել 22.2 հոդվածով հետևյալ բովանդակությամբ՝

**«Հոդված 22.2. Գազաբալոնային սարքավորումների տեղադրումը և գազաբալոնների պարբերական վկայագրումը**

1. Գազաբալոնային սարքավորումների տեղադրումը և գազաբալոնների պարբերական վկայագրումը իրականացնում են այն կազմակերպությունները և անհատ ձեռնակատերերը,

որոնք ունեն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված համապատասխան լիցենզիա,

2. Գազաբալունային սարքավորումների տեղադրման, գազաբալունների պարբերական վկայագրման արդյունքում լիցենզավորված անձը տրամադրում է գազաբալունների պարբերական հերթական վկայագրման ժամկետը նշող, ՀՀ կառավարության կողմից սահմանված նմուշի կտրոն (այսուհետ՝ կտրոն), որը պետք է փակցվի տրանսպորտային միջոցի վրա՝ վարորդի կողմից առջևի հողմապակու վերևի աջ անկյունում:

3. Շահագործման մեջ գտնվող գազաբալունները ենթակա են պարտադիր վկայագրման:

4. Գազաբալունների լցավորումը կտրոնի բացակայության կամ ժամկետանց կտրոնի առկայության դեպքում արգելվում է, բացառությամբ այլ պետություններում գրանցված ավտոտրանսպորտային միջոցների վրա տեղադրված գազաբալունների, որոնց լցավորումը պետք է իրականացվի միայն ավտոտրանսպորտային միջոցի գրանցման երկրի օրենսդրությամբ սահմանված համապատասխանության փաստաթղթերը ներկայացնելուց հետո: Վերջիններիս ձևանմուշները տեղադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմնի կայքէջում:

5. Կտրոնը համարվում է խիստ հաշվառման փաստաթուղթ: Կտրոնները լիցենզավորված անձին տրամադրում է Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր մարմինը՝ գանձելով օրենքով սահմանված չափով պետական տուրք:

6. Արգելվում է անընթեռնելի արտադրման տարեթվով և շահագործման ավարտված ժամկետով գազաբալունների տեղադրումը և վկայագրումը: Այդ գազաբալունները ենթակա են խոտանման:

**Հոդված 4.** Սույն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածները ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից, 3-րդ հոդվածով լրացվող 22.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ 5-րդ, 6-րդ մասերը սույն օրենքի հրապարակումից վեց ամիս հետո, և 4-րդ մասը՝ օրենքի հրապարակումից մեկ տարի հետո:

**Հոդված 5.** Մինչև սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող 22.1-րդ հոդվածի 4-րդ մասի ուժի մեջ մտնելը տեղադրված գազաբալունային սարքավորումներով կամ վկայագրված գազաբալուններով ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերը կամ տիրապետողները սույն օրենքի 3-րդ հոդվածով լրացվող 22.1-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ 5-րդ, 6-րդ մասերի ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում լիցենզավորված անձանցից ստանում են կտրոններ՝ ներկայացնելով ՀՀ կառավարության կողմից սահմանված փաստաթղթերը՝ վճարելով դրա համար սահմանված պետական տուրքի չափով:

Այս դեպքում գազաբալունների նոր վկայագրում չի կատարվում և հաջորդ վկայագրման ներկայացման ժամկետը չի փոխվում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**«ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

**Հոդված 1.** «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգիրքի 137<sup>2</sup>-րդ (այսուհետ՝ Օրենսգիրք) հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր պարբերությամբ.

«Ուղևորափոխադրումներում ներգրավված սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցները առանց գազաբալոնների պարբերական վկայագրման ժամկետը նշող կտրոնի (այսուհետ՝ կտրոն) կամ ժամկետանց կտրոնի առկայությամբ շահագործելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում ուղևորափոխադրող կազմակերպության պաշտոնատար անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով.»,

**Հոդված 2.** Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 150.10-րդ հոդվածով.

**«Հոդված 150.10. Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման, գազաբալոնների պարբերական վկայագրման և լցավորման պահանջները խախտելը**

1. Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների (այսուհետ՝ գազաբալոնային սարքավորումներ) տեղադրման կամ գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացման լիցենզիայի պարտադիր պահանջները կամ պայմանները խախտելը, եթե դրանք չեն առաջացրել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված պատասխանատվություն՝

առաջացնում է տուգանքի նշանակում պաշտոնատար անձանց նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

2. Գազաբալոնային սարքավորումների տեղադրման և պարբերական վկայագրման կարգի պահանջների խախտմամբ կտրոնի տրամադրումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ գազաբալոնային սարքավորումների տեղադրման և վկայագրման իրավասություն ունեցող կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

3. Գազալցակայանում կտրոնի բացակայությամբ կամ ժամկետանց կտրոնի առկայությամբ, իսկ այլ պետություններում գրանցված ավտորանսպորտային միջոցների դեպքում առանց համապատասխանության փաստաթղթերի ներկայացման գազաբալոնների լցավորումը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ գազալցավորողի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի, իսկ գազալցավորման կայանի պաշտոնատար անձի նկատմամբ՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

Սույն հոդվածով նախատեսված խախտումները, որի համար արդեն կիրառվել է վարչական տույժ, մեկ տարվա ընթացքում կրկին անգամ կատարելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ տվյալ խախտման համար նախատեսված տուգանքի կրկնապատիկի չափով:

**Հոդված 3.** Օրենսգրքի 244<sup>13</sup> հոդվածի 1-ին մասի «137<sup>1</sup>-137<sup>6</sup>» թվերից հետո լրացնել «, 150.10» թվով:

**Հոդված 4.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում օրենքի հրապարակումից մեկ տարի հետո:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՕՐԵՆՔԸ**

**«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ  
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ օրենք) 16-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 28.2 կետով՝

«28.2. Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրում և պարբերական վկայագրում իրականացնողներին հերթական վկայագրման ժամկետը նշող կտրոն տրամադրելու համար՝

յուրաքանչյուր կտրոնի համար բազային տուրքի 50 տոկոսի չափով:»:

**Հոդված 2.** Օրենքի 19-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15.7-րդ ենթակետով.

«15.7. Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և պարբերական վկայագրման գործունեության իրականացման համար՝ տարեկան

բազային տուրքի 300-ապատիկի չափով:»:

**Հոդված 3.** Սույն օրենքը ուժի մեջ է մտնում օրենքի հրապարակումից վեց ամիս հետո:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՄ

**««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», ««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի**

### **1. Իրավական ակտերի անհրաժեշտությունը (նպատակը)**

Հայաստանի Հանրապետությունում օրըստօրե մեծանում է սեղմված բնական գազով կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների թիվը, այն արդեն իսկ գերազանցում է հանրապետությունում շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների ընդհանուր թվի 50 տոկոսը: Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի N 2388-Ն որոշմամբ հաստատված տեխնիկական կանոնակարգը իր ներկա բովանդակությամբ չի ապահովում գազավառելիքային սնման համակարգերով լրակազմված ավտոտրանսպորտային միջոցների լիակատար անվտանգությունը, ինչի հետևանքով առաջարկվում է ՀՀ նշված օրենքներով լրացնել առկա բացերը, համապատասխանեցնել անվտանգության ներկա պահանջներին:

### **2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները՝**

Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման տեխնիկական կանոնակարգը գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործման հրահանգը և բալոնների պարբերական վկայագրման ու գազաբալոնային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի ճնշափորձարկման աշխատանքներ կատարող կազմակերպությունների արտադրական բազաներին և բանվորական ու ինժեներատեխնիկական անձնակազմերի գիտելիքներին ներկայացվող պահանջները հաստատված են ՀՀ կառավարության 2005 թ սեպտեմբերի 28-ի թիվ 2388-Ն որոշմամբ, ինչը հակասում է ոչ միայն «Տեխնիկական կանոնակարգման մասին» ՀՀ օրենքի, այլև ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածի 2-րդ կետի պահանջներին, համաձայն որի բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները:

Գործընթացի իրականացման ընթացքում առաջ են եկել մի շարք խնդիրներ, որոնք օրենսդրական կարգավորման կարիք ունեն:

### **3. Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**

Ոլորտում իրականացվող քաղաքականության ուսումնասիրության արդյունքում անհրաժեշտություն է առաջացել իրականացնել գազաբալունային համակարգերով լրակազմված ավտոտրանսպորտային միջոցների շահագործման անվտանգության ապահովմանը ուղղված օրենսդրական համալիր լուծումներ:

Հաշվի է առնվել նաև տվյալ բնագավառի կազմակերպման միջազգային փորձը:

### **4. Կարգավորման նպատակը և բնույթը.**

Սույն նախագծերով առաջարկվում է լիցենզավորել Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալունային սարքավորումների տեղադրման, բալունների պարբերական վկայագրման գործունեություն իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին՝ սպառողների իրավունքների պաշտպանության, ծառայությունների որակի բարձրացման, նրանց նկատմամբ պատշաճ հսկողության իրականացնելու նպատակով: Հայաստանի Հանրապետության կառավարությանը օրենքով տալ լիազորություն սահմանելու սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալունային սարքավորումների տեղադրման և բալունների պարբերական վկայագրման կարգը և նշված գործունեությունները իրականացնող կազմակերպությունների արտադրական բազաներին և ինժեներատեխնիկական անձնակազմերի որակավորմանը ներկայացվող պահանջները: Սահմանել վերահսկողական մեխանիզմներ՝ վարչական պատասխանատվության ենթարկելով սահմանված պահանջները խախտողներին:

### **5. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք.**

Որոշման նախագիծը մշակել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի տրանսպորտի վարչությունը:

### **6. Ակնկալվող արդյունքը.**

Հայաստանի Հանրապետությունում սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով շահագործվող ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալունային սարքավորումների տեղադրման, բալունների պարբերական վկայագրման և գազաբալունային ավտոտրանսպորտային միջոցների գազավառելիքային սնման համակարգերի հերմետիկության ստուգման գործընթացների կարգավորում: Այդ աշխատանքները կատարող անձնակազմերի որակավորման և գազավառելիքային համակարգով լրակազմված տրանսպորտային միջոցների շահագործման անվտանգության բարձրացում:



## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», ««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ**

### **1. Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը.**

««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», ««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի ընդունման կապակցությամբ ուժը կորցրած կճանաչվի ՀՀ կառավարության 2005 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 2388 և 2006 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1582 որոշումները:

### **2. Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը.**

««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին», ««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի գործողությունը միջազգային պայմանագրերին չի հակասում:

### **3. Այլ տեղեկություններ.**

Առաջարկվող կարգավորումները քննարկվել է ՀՀ էկոնոմիկայի և տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություններ հետ:

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին»,  
««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ  
օրենքում լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում  
լրացումներ կատարելու մասին» ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ»  
Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ  
օրենքների նախագծերի նախագծմանը և քննարկմանը հասարակության մասնակցության  
մասին

### ***1. Հասարակությանը նախագծի վերաբերյալ իրազեկումը.***

Նախագիծը տեղադրվել է համացանցում՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության  
[www.mtc.am](http://www.mtc.am) կայքում:

### ***2. Հասարակության մասնակցությունը նախագծմանը և/կամ քննարկումներին.***

Նախագծի մշակման փուլում իրականացվել են քննարկումներ ոլորտում գործունեություն  
իրականացնող կազմակերպությունների հետ

**Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք**

««Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին»,  
 ««Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում  
 լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ  
 կատարելու մասին» ««Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի  
 Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների  
 նախագծերի ընդունման դեպքում պետական բյուջեում կամ տեղական  
 ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական  
 վելացումների կամ նվազեցումների վերաբերյալ

Պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեների վրա ազդեցություն					
Ցուցանիշներ	ընթացիկ (n-րդ) տարի		Հաջորդող 3 տարիները		
	Ըստ n-րդ տարվա պետական բյուջեի	փոխություն ը n-րդ տարվա պետական բյուջեի համեմատ	n +1	n +2	n +3
			Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)	Փոփոխությունն ընթացիկ տարվա համեմատ (n)
1	2	3	4	5	6
1. Եկամուտներ					
1.1. պետական բյուջեի եկամուտներ					
1.2. ՏԻՄ եկամուտներ					
2. Ծախսեր					
2.1. պետական բյուջեի ծախսեր					
2.2. ՏԻՄ բյուջեի ծախսեր					
3. Ֆիսկալ ազդեցության գնահատական					
3.1. պետական բյուջե					
3.3. ՏԻՄ բյուջե					
4. Եկամուտների և ծախսերի հաշվարկների մանրամասն ներկայացում (անհրաժեշտության դեպքում կարող է ներկայացվել հավելվածի տեսքով):	Նախագծերի ընդունման կապակցությամբ պետական բյուջեի և տեղական ինքնակառավարման մարմինների եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:				
4.1. Եկամուտների գնահատում					

4.2. Ծախսերի գնահատում	
5. Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)	